

25000 հազարազրամ ծծմբական թթվուուս  
և 40000 հազարազրամ երկաթի բաղադրու-  
թին :

Վերելքն այն ժամանակ տեղի կ'ունենաց  
երբ օդն լաւ է. առաօտեան ժամը 9էն  
մինչեւ երեկոյեան ժամը 11: Օդազնացտ-  
կան ընդարձակ պարուէջն յերեկոյին կը լու-  
սաւորուի վեց աղեղնաձեւ լապտերներով:

Զօրաւոր լուսարձակ մի իւր ճառագայթնեւ-

ըը կը սփոէ կալուկապ օգապարիկին վերայ՝ որ  
լուսեղէն գունդ մի կը գտնայ: Լուսանկար-  
չական ընկերութիւնն մի հաստատուած է՝ իւ-  
րաբանչիր ճամբորդութիւնի լուսանկարելու  
համար :

Մինի աշխարհահանդէսն մեծ և նշանաւոր  
գործ մ'է որոյ այցելութիւնն այլ շատ հետա-  
քընական: Յիրաւի զայն պատրաստողք ար-  
ժանի են բարեմաղթութեանց :

## Ն Կ Ա. Ր Ա. Գ Ի Բ

### ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՒԽՈՍՈՒԹԵԱՆ

Ի Զ Ա Ր Ր Ո Ր Դ Գ Ա Ր Ո Ւ



(Հաս Վիւճեի)



Որորդ զարն նախկին եկեղեցւոյ  
մեծ յեղանակ և միանցամայն քրիս-  
տոնէական գրականութեան ոսկեպարն  
է: Այս յեղանակին մէջ եկեղեցին  
ընկերական օրինօք հաստատեալ քա-  
ղաքային տէրութիւն մի կը դառնայ, այն  
տաեն ի պերճախօսութեան և ի դպրութեան  
յառաջ կը բերէ այն վեմ և պայծառ հան-  
ճարները, որոց ոչ երբեք նման մրցակիցց կը  
զտուին՝ բայց եթէ Գաղղիոյ Ժէ դարու  
սրբազն քարոզաց մէջ: Ո՛չափ արգաբեւ  
մեծամեծ մարդիկ, ո՛քքան գերազայն ճար-  
տասանք կ'ելնեն Ս. Այթանասէն մինչեւ Ս.  
Աւգոստինեայ ժամանակն, ի՞նչ հրաշազօր  
մտարական շարժմոնք բավանդակ հոռվիւ-  
կան աշխարհին մէջ, ի՞նչ տաղանդներ՝ նե-  
րախոն մըցմանց մէջ հանդիսացեալ, ինչպիսի՛  
ոյժ մարդկան հաւատոց վերայ բանեցուցած,  
ի՞նչ կերպարանափոխութիւն բովանդակ ըն-  
կերութեան, այն կրօնից ճայնիւ որ ի գետ-  
անադամանաց կը վերանայ ի դահոյս կայսե-  
րաց, որ ըստ կամ իւր ի գործ ածէ երբեմ  
մարտիրոսաց արեամբ մաշեցուցած սուրբ:

Արդի ժամանակներու և մանաւանդ գաղ-  
մից Ժէ զարուն մէջ, քրիստոնէութիւնն  
կերպով մի քաղաքականութենէն օգնութիւն  
կը գտնէր, նորա հետ կը մաքուզարդուէր  
որով և նոյն պայծառութեամբ կը փալփէր  
ինչպէս արուեստըն: Ժէ զարու մեր գեր-  
ճախօսքն զիրենք շրջասաստղ հանճարներէն  
կ'օգտուին և կը ներշնչին: Նոյն իրենց լե-  
զուին մէջ կը ցոլացունեն այն շքեղութեան  
և քաղաքակիթութեան պայծառութիւնը, զոր  
կը պախարափէին յապարանա լուգուիկեայ  
Ժէ ի. նոյն զնոյն երբեմն զննամբ կը  
զգենուն և երբեմն կը լաման: Եթէ Բասիէ  
իւր մեծութեամբ և աշխատիւն գերազանց  
ոմն է, այլ և քաջայաց է ամենուն՝ թէ  
ինքն եւս իւր ժամանակցաց հետ մի և նոյն  
մտածութիւններով մներ ու աներ է, և թէ  
ինքն եւս մի և նոյն յեղանակի այլ երջանիկ  
բեղմանորութեան պտուղ մ'է:

Սակայն Դ զարու մէջ, որչափ որ այլն  
ամենայն կը փնանայ՝ թուի թէ քրիստոնէա-  
կան պերճախօսութիւնն կ'անի և կը զօրա-  
նայ: Այս մոտց և արիսութեան ամենէն ա-

մօթալի ցածութեան իջած ժամանակն, երբ ներըինից կառավարէին զինքնակալութիւն, և բարբարոս վրովիլին, այն ժամանակն Աթանաս մի, Ասկերերան մի, Ամբոսիոս մի, Ագրոստիոս մի, կը լսեցնէն ամենէն մաքուր բարյականը, ամենէն գերազայն պերճախոսութիւնը: Մայս սոցա հանճան կամ գուն կը մնայ ինքնակալութեան ընկնալու ժամանակ, կործանման և փլասակաց մէջ սորա հիմնարկոց կ'երեւն: Եւ յիրափ, վասն զի ճարտարապետը էին այն մեծ կրօնական շենուածոյն՝ որ պիտի փոխանորդէր հոռվէմական ինքնակալութեան:

Անչուտ օգտակար պիտի լինի, եթէ իմաստափրական և բարյական սեսակիսով նկատելով ի մի հաւաքենք այս մարդկանց հանճարոյն մի քանի արտադրութիւնքը, որ շատ անզամ կամ աստուածացուցման կամ հեցուոթեան առարկայ եղած են: Մանաւանդ աւելի եւս հետարքրական պիտի լինի բաղաստել սոցա ժամանակները և սեղասորել դիզարու կրից և զաղափարաց մէջ այս մարդկիները՝ որք եկեղեցւոյ հաւատիք պատմութեանց մէջ կ'երեւնի իրր անալյալլակ վկայը անփոփոխ աւանդութեան մի:

Այս պատմութիւնքը կարդալով անշուշտ պիտի ըսուի՛ թէ դիզարու մէջ կրօնական և քաղաքական կարգն կանոնալորուած էր, ինչպէս լուսութիւն ժդի ին ժամանակ, թէ մարդկի նոյն օրինակ կ'ապրէին, և թէ նախկին ժամանակաց մնարիսու մի արքունեաց եպիսկոպոսի մը կը նամանէր: Սակայն անաշառ ակնարկ մի ձգելով այն հին ժամանակ, կաց վերայ, ինչպիսի տարբերութիւնը կ'անշատեն այս յեղանակներս, որպիտի՛ չքնաղ և նորանշան պատկիրներ կը ծնանին ի մեզ: Անաշառ ըսելով կ'իմանամ թէ երեւակայութիւն և թէ զատողութիւնը, որ իրաց մէջ ճշշմարտութիւն փնտուելու ժամանակ՝ պատմութիւնը չի նկարեր մատրքեր ժամանակի դրյաներով:

Քրիստոնէական նախկին դարուց պերճախոսութեան և վանդապետութեան հաւաքածոյը քննելու համար ես յանախ երկար ժամանակ ծախեցի: ինձ կը թուէր՝ թէ աշակարհիս վերայ գործուած այդ ամենամեծ յե-

ղափոխութեան հանդիսատես կը լինէի: Այս՝ ես կը փնտուէի այդ աստուածաբանական մատենադարանից մէջ ժողովրդց սովորոյթը և հանճարը, Քրիստոնէայ պերճախոսաց կենականի երեւակայութիւնն, նոցա կոիներն և եռանդուն աշխոյժքն կը կենականացունէին աշաց առջեւ աշխարհ մի՛ որ ոչ ևս էր. և զոր նոցա ազգու և կաթովին խօսքերն՝ պատմութիւնէն աւելի շատ լաւ կերպով մեզ աւանդիր են: Ամենէն աւելի վերացական ինդիներն կը կենականանային հակաճառութեան լեզուաւն և ճշմարտութեան աշխուժին: ամենայն ինչ շահ և կեանք կը բերէր. վասն զի ամենայն ինչ անկեղծ էր: Մեծամեծ աւագինութիւնք, վառլուռն համոզմունք, իսկատիզ բարը կը կենդանացունէին նորապանչ զարու մը պատկերը. զար մի՛ որ բոլորովին սիրահարուած էր բնազնացական և աստուածաբանական գիտութեամբք, և որոյ համար զարմանալին և անիմանալին գարձեր էր մի բնական կարզ և իրականութիւն:

Այս մատին և զաղափարական գյուղութեան հետ նաեւ կու գային կը խանութիւնն բալորովին ներհակութեամբ հասարակաց կենաց պատմաբարըն և մեր բնութեան հասարակ կը քերն ու ախտերն, Աշխարհաքաղաքացի կրօնի մը ձեռօց զանգուած քաղաքականութեանց և ժողովրդց խանուորդն՝ ոյն տեսարանիով վերայ նոր երեսովներ կը յաւելոյր: Քրիստոնէութիւնն այլ և այլ կերպով կը ներգարծէր, այլ և այլ աստիճաններով մուտք կը գործէր հոռվէմական լծոյն ներգեւ խոնարհած ազգաց մէջ, որք ծագմանքը, բարուք և կիմային տարբերէին յիրերաց: Սոցա նախնական բնագործմն յերեւան կու գար կրօնական եռանդեան ազգեցութեամբ՝ որ զիրենց յերիրաւոր կապանաց կ'արձակէր: Ասորին, յոյնն, ափրիկեցին, կեղան, սպանիացին իրենց քրիստոնէութեան մէջ ունէին իրեւանց սեփական տիբար, և նոյն ժամանակաց բազմթիւ հերեւիսիլուութիւնքն՝ աւելի ազգային քան թէ աստուածաբանական էին:

Հարց զրուածքն բոլոր այս զանազանութեանց պատկեր մ'են: Նոցա խօսհորաց հակաճառութեանց և նրբամատութեանց միջէն յանկարծ կը ծագին ժողովրդց պատմու-

թեան մանրասահանութիւնքն, բարոյական երկարաւուն յեղափոխութեան մի յառաջադիմութիւնը, հին սովորութիւն մի յամառութիւնն, հաւատաց ազգեցութիւնն երկարեալ քան դպրութեանն, նորանոր հաւատոք որ կը սկսի ծողովրդեան ձեռօք և զորս կ'ամիացունէ ինքն զիտութեան և պերճախօսութեան մէջ, հուսորաց տեղ փոխանակին Ալպարեալք. և ահա քրիստոնէութիւնն՝ հին աշխարհի մէջ քաղաքականութեան մի նոր դար կը կազմէ, որ բոլորին զատուած կ'երեւի հույսմէական ինքնակալութենէ. և սակայն անոր հետ կը կործանի:

Հոն կը տեսնուի՝ յետ երկար ժամանակաց հույսմէական լծոյն ներքեւ ընկնուած յունական հանճարն, տակայն հիմա կրօնական նախանձայուղութեամբ վերսաին ողեւուրած փոխանակ ունայն պերճախօսութեամբ իւր վարդապետները զուարճացնելու, կը ճգնի նա զաշխարհ ամենայն որալի ի հաւատու իւր։ Այդ հանճարն տէրութեան ամեն կողմէերը զինթէ միանգամայն սփռուած կը տեսնուի, կը փալիքի նա յԵղիպտոս, ի կիրենիս և մանաւանդ ասիֆական Յունաստանի մէջ, ուսկից ոչինչ չէ մասցեր՝ որ երբեմն այնքան հաշակաւոր էր իւր շաղովութեամբն և հարրատութեամբ։ Տակաւին հզօր է նա իւր ծննդավայր երկրին վերայ, և նոյն իսկ այն տեղերը ուսկից լուսաւորեց զիտալիս ՚ի ձեռն Պիտիագորայ, և աիրեց Ալբեմելքի ի ձեռն Աղեքաննդրու։

Զօրորոդ դարու մէջ Ալթէնքն միշտ արտեաից և պարութեանց քաղաք եղեր է, մի յիշատակարանօք և ուսումնարանօց։ Նա երբափոյ և Սսիկ բոլոր ուսումնատեն պատանիքը առ ինքն կը ճպէ, նախկին դարու այդ եռանգուն աշակերտներովն կը չէննայ, որոնք անյազ են թէ զիտութեան և թէ հրարաշալեաց, կ'ուշեն ամեն բանի մէջ թափանցել, ամեն ինչ իմանալ, անհանգիստ պարզութեամբ մի կը փնտուեն նորա զջմարտութիւնն, և մոլուռանդութեամբ մի պաշտպան կը կենան այնմ։ Այդ երիտասարդութիւնն իւր վարժապետաց ընթացից կը հետեւի, կ'ընկերանայ նա նոցա կուուց և յաղթանակաց նոյն յուզմամբ՝ ու

բով երբեմն թընկայր ուշազիր ամբոփին յընթացս կառարջաւաց։

Աշխոյդ և փոթաջան երիտասարդութիւնն իւր զրօսախաղերով կը թընդացնէ Ալթէնք քաղաքը մի նոր աշակերտի զարուասր ողջունելու համար, և երկար ժամեր կ'անցունէ ճեմարանի դասասացութեանց։ Ալթէնքն լեցուած է թէ քրիստոնեայ եկեղեցներով և թէ կոս մենեաններով. բազմաստուածութիւնն հոն կը տեւէ տակաւին չնորինի արուեստից։ Երկու կրօնից ապակայ պաշտպաններն եւս նոյն զարոցի մէջ կը գտննեն զիրեարա առանց զիտնալու (ապակայի մէջ պատառելիքն)։ Այդ կրիկն երիտասարդ մարզիկն՝ որ այնքան լուրջ և հեղահամբոյր կ'երեւին, զարմնանալի եղած իրենց բնիկերափիցներէն, որոց յիմարդութիւններէն կը խորշին յոյժ. և ահա այդ յիրերաց անբաժան անձինցն՝ որ Ալթէնքի հրապարանաց մէջ միայն քրիստոնէից եկեղեցւոյ և զարոցաց ճանապարհը զիտեն, սորա են Գրիգոր Նավիհանզացին և Բարսեղ. բայց Յունաստանի մէջ սոցա վրայօք կը խօսին, սոքա դպրութեան և արտաքին պերճախօսութեան մէջ կը գերազանցեն։

Սաց քովէն կ'անցնի շատ անպամ լուռու ու մունջ երիտասարդ մի, անկանոնաւոր և շտապողական քայլերով, փայլուն և կրակու հայեցուածով, իւր մազին իսկոսակիրն դէպ ՚ի վար թողած, պարանոցն թեթե կերպով ծուած և զէմբն փոփոխ և արհամարհուա։ Հազած է նա իմաստուիրաց կամ վերարկուն, նորա ետեւն ընթացող ամբոխն կը գուշակէ նորա բազզը, մանաւանդ թէ նորա վոսնդները։ Սա հովվմէական պետութեան նախանձախնդրութեան տակաւին նոր զոհուած Գաղղոս կայսեր եղբայրն է, սա ինքն է Յուլիանոսն, որ կոստոս կայսեր կասկածները փարատելով եկեր է յԱլթէնա, ուսմունք սովելու ուսմանց սբբարանին մէջ, և զուցէ իւր բազզին վրայօք ի ժածուկ խորհուրդ հարցնելու իմաստուիրաց և քրմապետաց։ Քրիստոնեայ է նա, և նոյն ժամանակաց յաճախ սովորութեան հակառակ մանակութենէ ընդուներ է մկրտութեան խօսչըրդոցն կնիքը։ Յուլիանոս երբ կը յանձնուի արքանի եպիփուառի մը հապարձու։

թեան, փառասէր և քիչ յետոյ հերձուածողն իշխերիս, կայսրն կը ստիպէ զՅովիանոս այլ եկեղեցական աստիճան մ'առնուլ վրան և ընթերցողի պաշտօն վարել Նիկոլովիս մայր եկեղեցայն մէջ : Ցույխանոս իրեն առատապէս արուած նուէրներով կը զարգաբէ մարտիրոսաց դամբանները, և իւր եղօրօ հետո ի միախին քրիստոնէից եկեղեցի մը շինէլ կուտայ : Սակայն իւր հաւատոյն վերայ կը տատակուտիք, և տակաւին վաղեմի կրօնի յարած Եցյներու յստ մի կու տայ իւր առ Հոմերոս ունեցած սէրն : Եցյներն շատ կը պարծին նորա հանճարոյն և առ գիտութիւն տանեցած սիրոյն վերայ, որոց թուի թէ հաւատիք մ'են նորա աստիճանն, տաղանդն և երիտասարդութիւնն, որ և զարմանալի դիպուածու մի անվտանգ մասցեր էր կոստափ անդութիւններէն :

Ասիոյ մէջ կը պայլի Անտիոք իւր եկեղեցիններով և թատրներով. երեւակայութեան և զրգանաց խանուուրդն հաւասարագէս կը սպասուի թէ անաշատ խառութեանց և թէ հաճոյից : Հու նոր կրօնի աշակերտոն առաջին անգամ իրենց վերայ քրիստոնեաց անունը զրոշմեցին, որ յետ երկու դարուց՝ աշխարհի ամեն կովմ կը ասրածուի . հոս Լիքանիոսն հեթանոս ի սէր Հոմերի կը բանայ իւր զարոցը, որուն կը հետեւի Ռսկերեան . հոս Ցույխանոս կայսրութեան աէր եղած և միշտ իմաստակ, կը զրէ իւր երշիքարանական քերմութենցն ընդդէմ քրիստոնէից : Անտիոք քաղաքն կանգնուած է Ուրոնաէս գետոյ ափանց վերայ, մի հրաշալի զաշտի մէջ՝ զօր. կը պասկէն լիքանց զարմէներն, յորս ափուել կ'ասպիրին մի քանի միայնակեացը : Քրիստոնէութիւնն այս քաղաքին ամեն ունեցածին վերայ տիրեր է, բաց ՚ի նորա կառարշաներէն և թատրներէն. սակայն ամենեւին արիւնալից զրուանց չն նսեմացնէր այս հրաշակերու քաղաքն Տօնք, զիշերային պարանանդէսք, զիտնական ժողովը և հաճոյը կը զարդեցնեն աեղուց խաղաղասէր բնակիչքը : Աղանդոց բաժանմունքը բնական իշխանութիւն մը չեն հաներ մէջտեղ, նորա զիրար կը ծաղրեն առանց ամենեւին զմիւլեան վիրաւորելու :

Արքանիոս Անտիոքայ մէջ աներկիւդ կը ներբողէ զՊովիանոս անոր մահուրնէ յետոյ . և Պարմոն բազմաստուածութեան աւերակները կ'ողբայ . սակայն ամբոխն երիտասարդ և պերմանոս Ռուկերեանի քայլափոխ կը հետեւի, և նորա ճառից ազգեցութեամբն՝ ծափանարութեամբը կը թշնդայ սրբավայրն, զիւղերէն և քաղաքներու զուներէն ամեններն նորա ետեւէն կ'ընթանան, և զրազմութիւնը արեգական կիզիշ ջերմութենէն պաշտպանելու համար կտաներով կը ծածկեն ողը . ժողովլուրդն կարգէ զարգ զմայլած ուշ կը զնէ նորա զիւղի խօսքերուն :

Այսպիսի է ահա Ասիոյ Ցունաց կեանքն . և յեւ Հռովմայ հպասարկ և միանգամայն քրիստոնեաց լինելու՝ սակայն զրիթէ բնաւ չփոփոխելով իրենց բարըը, ոտվորոյթը և հանճարը :

Սակայն սրբան Անտիոքն հանգարատ է, նոյնափ այլ աւելի խոռվալից և մրրկալից կը նկարագրէ մեզ Ո . Ալթանաս զԱղեքսանորիա իր զրուածոց մէջ : Այս քաղաքն շահատան մ'եղեր է վաճառականութեան, և հայրենիք ամենայն աղանդոց . հոն կը բնակին ամենէն ներանձնացեալ և ամենէն ճարտար մարզիկ : Հոն պողոնէակառոց աստղաբաշխական զիւտարանին և ընդպրձակ զրատան զուլ՝ որ հետզհետէ կ'ամի՞ անթիւ արուեստանցներ կը նշանարկին . բաց յիմաստափրաց հոն ոչ զր պատարկ կը կենայ, բոլոր օրն զրազած են կտաւ հիւսելու, թուզի շինելու, ապակի փշելու, մետաղ բանելու, հոն կոյրեն անգամ կ'աշխատին : Բնակչաց, ստարականաց և ճանապարհորդաց այնպան խուռն բազմութեան մէջ՝ կայ ամենեւին կարծիք կամ հերձուած և ոչ բարուց կամ վարդապետութեան եղականութիւնն մի՝ որ զիւրա չածեսի և կամ անպատճաս մէխսեղ չ'ելնէ : Հոն բնաւ հաստատան և կանոնաւոր հալածանք մի տեղի չէ ունեցած բնդիմէ քրիստոնէութեան կառարան և հոս զինուորական կոտորածք, այլ խիստ սակաւ անգամ մահապարտութիւն և մարտիրոսութիւն : Բնակչաց յանգուզն բազմութիւնն մը հումանայեցի կուտական ները կը զարդուրեցնէ : Այսքան փութաջան և միանգամայն խոռվալից քաղաք

բնաւ չէ եղած. բնակչաց բարցն զաղանա-  
բարոյ բան մ'ունի, և ձեռքերն շատ անգամ  
արեամբ կը շաղախին : ՄԵԿեան մի ձեռք  
ձգելու համար կը սկսին զինուք հակածարիլ,  
և մանաւանդ աելի եւս կը կուռին արքե-  
պիսկովսարանին համար, յիրաւի այս աստի-  
ճանիս յարցն շատ մեծ է յաշ ժողովրդեան :  
Աղեքաննդրիս իւր վաճառականութեամբ ցո-  
րեան կը հայթայթէ Հռովմայ և Խաւլիսյ,  
և երբ եաեւէ կը լինին նուաստացունել զի-  
թանա կայսեր առջեւ, իւր վրայօք ամբառ-  
տանութիւն մի կը հանեն՝ թէ ինքն իւր  
իշխանութեամբն Եզիպտոսի նուաստրմղաց  
երժն կարգելու՝ Հռովմը սովոր բռնելու համար :

Չորրորդ զարու վեհ ճարտասանից զրուա-  
ծոց մէջ լաւ կերպով Նկարուած կը աեսնուի  
կ. Պոլոյ բարցն, շոայլլութիւնն, կայսերական  
ապարանքն և իւր ափաւերն : Սա աշխարհի  
և միանգամայն կրօնից մայրապարքն է. հոն  
հետզիւտէ եպիսկոպոսական աթոռին վերայ  
կը փայլին Գրիգոր Նավիանզացին և Ռուկե-  
րեան. սակայն միանգամայն այս քաղաքո  
կեզրոն մ'է՝ որ կու զան կը յանզին Աղեք-  
սանդրից նուրդ հանճարներէ և Յունաստանի  
իմաստասիրութենէ հնարուած աղանձներն.  
Հոն կու զան արժէք տալու այս հերձուածնե-  
րու, մուծանելով յարունիս և ջանալով ան-  
կէց մի քանի սեննիկապետ և կամ պալա-  
տական մի քանի ներքինի որսալով : Անգա-  
նօր ակն յայտնի յերեւան կու զան արեւե-  
լեան պետաթեան ամենայն խեղճութիւնցն,  
իշխանաց քամանանոյ բանակալութիւնն, պա-  
շտականաց զաղանածառու հնարքն, և նո-  
րակառոյց մեծ քաղաքի մը շատ շուտով ա-  
պականութիւնն, քաղաք մի՛ որ ոչ յունական  
և ոչ հոռմէեական կը համարուի. և աւելի  
զաղթականաց երկրի մի նմանութիւն ունի՝  
քան մնյաբաղադրի : Սակայն կ. Պոլիս նոյն  
իսկ իր նորութեան համար, իւր յիշատակա-  
րանաց, հանգիսից և սոլուրութից մէջ չ'ունի  
մի այնպիսի քան՝ որ յիշեցնէ զկուապաշտու-  
թիւնը : Ինքն քրիստոնէութեան յաղթանա-  
կին հետ ժամանակալից է, ուսաի և քրիստո-  
նեայ կայսերաց շատ սիրելի, զիրենք կրօ-  
նական կամ ազատութեան ոչ մի յիշատա-  
կօր չնեղելուն համար :

Ենոյ հակառակն Հռովմայ մէջ քրիստոնէու-  
թիւնն կես յաղթանակ միայն կանզներ է :  
Կրկին ընկերութիւնքն և կրկին կրօնը, ան-  
ցեալն և ապառնին իրարու դէմ կանզնած  
ընդդիմամարտ են : ՄԵԿեանք, կրկէսր, թա-  
աերք, նոյն իսկ փողոցք Հռովմայ լի հեթա-  
նուական յիշատակարանօք բնակչաց մի մա-  
սին կրօնական եռանզը վառ կը պահեն :  
Մանաւանդ սինզիմառական ընտանեաց մեծ  
ման տակաւին հին կրօնը կը գաւանէր և զմե-  
ծարան իւր նախնեաց ։ Ժողովրդին խուռն կը  
լցուի ցըրիստոնէից եկեղեցեաց և մարտիրոսաց  
գերեզմանաստանց մէջ : Գերիներն և աղքատ-  
ներն եռանդեամբ կը գրկեն նոր հաւատքը,  
որ իրենց միթիթարութիւն և օգնութիւն կու  
տայ, և որ ամեն տեղ նոցա առջեւ կը զնէ  
այն Գրուրեան սեղանը՝ զոր միայն Աթէնքի  
մէջ հեթանոս աշխարհն անզամ մի միայն  
ներեր էր :

Սակայն արգէն քահանանյից ախտերն և  
եպիսկոպոսաց շոայլլութիւնն և փառասիրու-  
թիւնն կ'ամբաստանուէր : Չորրորդ զարու  
մէջ՝ Հռովմայ հափսկոպոսական աթոռն ա-  
րինալից պատերազմա կը յուզուի : Այս  
կերպով ձեռք ձգուած իշխանութիւնքն պար-  
զեներով կը նոխանան և մի այնպիսի շո-  
ուայլլութիւնն կը ցուցընեն, զոր նոյն իսկ հե-  
թանոպք կը պարաւեն, և որոց մէկն անոնց  
գէմ գաւառական մի քանի եպիսկոպոսաց  
օրինակը դիմացնին զնելով՝ « Նոցա սակա-  
ւապիտութիւնն, կ'ըսէ, նոցա զգեստուց աղ-  
քատութիւնն, նոցա յերկիր խոնարհած ճա-  
կառն, նոցա պարզմուութիւնն և համեստու-  
թիւնն սիրելի կ'ընէ զանոնք Աստոծոյ յա-  
ւետենականի և նորա ճշմարիտ երկրագուաց » :

Դիտելու է զարձեալ, որ այն զարու մէջ  
Հռովմայ եկեղեցին բնաւ մեծ մասենազիր  
կամ ճարտասան մի յառաջ չէ բերեր, ինչ-  
պէս նոյն ժամանակին յառաջ կու զան յԱփ-  
րիկէ, ի Պունաստան և յԱսիա, այլ նա կը  
ջանայ ափուուիլ հեռու տեղեր և կ'ուզէ տիրել  
Ափրիկոյ, Գաղղիոյ և Սպանիոյ եկեղեցեաց  
վերայ : Նորա նսկասակն է աւելի մարգան  
իշխել, քան բարուոք խօսելու և գելու փառըը  
ձեռք ձկել, նա կը ջանայ զատաւոր լինել  
Յունաց իմաստակաց մորքն յառաջ եկած

բիւր հականառութեանց, նա կը հազորդակցից սոէպ արեւելեան վարդապետաց հետ՝ որոնց իրենց հալածանաց մէջ առ ինքն կը դիմեն, կը շահի զանոնց ապաստան ըլլալով նոցա: Գրեթէ բնաս աղանդ չէ կազմուած Հոսվիսյ եկեղեցւոյն մէջ. այս բանի մէջ իւր բնաւորութիւնն բոլորովին հակապատկերն է յունին, նա հին կանաներու վճռոք կը բաւականանայ, սակաւ նորաձեւաթիւն կը մոցընէ իւր մէջ, և իր հերետիկոսութենէ՝ կը զարհուրի փոփոխութիւն ընելէ, և առանց արեւելեան փառաց հաւասարեցու, ինքն իւր ժամանակաւոր խոհեմութեան և յամառութեան շնորհի վերջապէս կը զերազանցէ անոնցը:

Աղեքսանդրի աշխարհակարութենէ ի վեր յունական ազատ և համարձակ հանճարն՝ որ աւելի պրեւելեան է քան թէ եւրոպական զարձած, քրիստոնէութեան մէջ կը մուծանէ իւր սեփհական նորամութիւնները և այլարանութիւնները, որոց վլիսաւոր թատր էին Եզիփառու և Փօքր Ասիա, որոց բնակչաց աւելորդապաշտ երեւակայութենէն բիւրաւոր աղանդներ և յիմար կարծիքներ յառաջ կու դան: Հոսվիսյեցոց կամ մանաւանդ լատինախօս մողովորոց վերոյ աւելի նուազ գիտութիւն և հանճար կը փայի. սոքա Աղեքսանդրիոյ Յունաց քով անարութեաս աստուածաբաններ կ'երևին, սակայն իրենց կարծեաց մէջ աւելի հանդարտ և խոհական են: Կը զգուշանան Արեւելեայց հաւատոյ վարդապե-

առութեան մէջ գործածած նորամիտ բնագանցութենէն, և այն հերձուածն կամ փոխազրէ առ միմեան ունեցած հակառակութիւնն՝ որ շատ զարերէ յետոյ այս երկու եկեղեցիները յիրերաց անջատեց. նա արդէն իւր արմանն ձգեր էր քրիստոնէական նախանձայուղութեան սոյն այս նախկին զարուց մէջ. որոյ հետքն հարկ էր գանուելի նաեւ երկու զրականութեանց ատենախօսական յիշատակարանց մէջ եւս, այլ բաղդատութիւնն չէ կարելի ճշգիւ յառաջ տանիի: Արեւելեան եկեղեցին ոչ միայն երեւակայութեան և պերճախօսութեան ստոյդ առաւելութիւնն մ'ունի, այլ նաեւ լատին եկեղեցւոյ այն մասնագիրը իսկ՝ որ մի առանձին պայծառութեամբ կը փային նորա այլ կերպով մի արեւելեան կը համարուին: Յորոց ումանք՝ ինչպէս Ս. Հերոնիմոս, ապրեր են յԱստրիս, ի Հրէաստան, և իրենց աստուածային խանդերը շնչեր են Յորդանանու գետափակներէն. և ումանք՝ ինչպէս Տերբաւազիանոս, Կիպրիանոս, Առնորիս, Աւգոստինոս ծնած կարթազինեայ կիղիշ երկնքին ներցեւ, աւելի արեւելցի են քան թէ լատին: Հոսվիսյական լեզուն սոցա զըրուածոց մէջ կերպարանափոխ կը լինի, և իւր վերայ կը դրոշմէ աշխայժ և նուրբ արաբական հանճարոյն կնիքը, որ փոփիսակի կը կրէ զազկեցութիւն Ափրիկոյ և Ասիոյ արեւականց:

